Արձանագրություն N 2

ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/3-Ա ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան 28 նոյեմբերի 2019թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Քելեջյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Մարգարյանը, Ս. Նազարյանը և Գ. Հունանյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

1. Հայտերի բացման մասին

Սահմանված ժամկետում www.armeps.am **կայքի միջոցով ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/3-Ա ծածկագրով ընթացակարգի գնման հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)**

Մասնակցի անվանումը	Էլեկտրոնային հասցե, գործունեության հասցե և հեռախոսահամար
«Շինաշխարհ» ՍՊԸ	amshinashkharh@mail.ru ՀՀ ք. Երևան, Գոգոլի նրբանցք 32/1, հեռ. (37444) 29 19 45
«Սալյուտ ԿՕ» ՍՊԸ	saluteco@mail.ru ՀՀ ք. Երևան, Վ. Վահյան 17 տ. հեռ. (011) 58 00 08

- **ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/3-Ա** ծածկագրով մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2019 թվականի նոյեմբերի 26-ին, ժամը 15:00-ին:

Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

2. Մասնակիցների կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը

ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/3-Ա ծածկագրով ընթացակարգի մասնակից ընկերությունների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող առաջին փուլի փաստաթղթերը սակայն.

1. «Սալյուտ ԿՕ» ՍՊԸ-ի կողմից ՁՓ 1-ի համար ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ (Հավելված N 1 դիմում-հայտարարություն գնանշման հարցմանը մասնակցելու, Հավելված N 2 գնային առաջարկը և սույն հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվող «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման» լիցենզիան ու «Հիդրոտեխնիկական» ոլորտի ներդիրը):

2. «Շինաշխարհ» ՍՊԸ-ի կողմից ՁՓ 1-ի համար ներկայացված հայտում՝ Հավելված N 1 դիմում-հայտարարություն գնանշման հարցմանը մասնակցելու հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

3. ՁԿ-ԳՀԱՇՁԲ-19/3-Ա ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

- Մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4. Մասնակիցների առաջարկած գները.

Ջրային կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի տարածքում Արաքս գետի սահմանային Հ-39 նշանի հատվածում ափապաշտպան կառույցների վերականգնման աշխատանքների ձեռքբերում				
				Հազ. ՀՀ դրամ
1	ՁՓ 1 Նախահաշվային արժեք - 24,901.8			
	Ընկերություններ	Գին առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	«Շինաշխարհ» ՍՊԸ	15,500.0	3,100.0	18,600.0
2	«Սալյուտ ԿՕ» ՍՊԸ	19,469.020	3,893.803	23,362.82

5. Ուսումնասիրության արդյունքում

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Համաձայն ՁԿ-ԳՀԱՇՁԲ-19/3-Ա ծածկագրով հրավերի 7.9 կետի մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հանձնաժողովի քարտուղարը արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ համակարգի միջոցով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

6. Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ

Մինչև սահմանված ժամկետի ավարտը «Շինաշխարհ» ՍՊԸ-ի կողմից շտկվել է արձանագրված անհամապատասխանությունը:

7. Գնահատման արդյունքում

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 4)-րդ ենթակետը՝ այն է հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը (Համաձայն հրավերի 7.4 կետի) և համաձայն սույն հրավերի 7.2 կետի «Սալյուտ ԿՕ» ՍՊԸ -ի հայտը ՁՓ 1-ի մասով մերժել՝ ՁՓ 1-ի հայտում գնային առաջարկի անհամապատասխանության հիմքով: Անհամապատասխանություն է տեղ գտել Հավելված N 2 գնային առաջարկի, այն է ներկայացված փաստաթուղթը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/3-Ա ծածկագրով ընթացակարգի մասնակից «Շինաշխարհ» ՍՊԸ-ի կողմից առաջին փուլի ներկայացված փաստաթղթերը գնահատել բավարար հրավերի պահանջների նկատմամբ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետը, ինչպես նաև ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/3-Ա ծածկագրով ընթացակարգի հրավերի 7.6 և 7.7 կետերը հանձնաժողովը հրավերի ոչ գնային պահանջները բավարարող գնահատված մասնակցին հրավիրում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, որը տեղի կունենա 03.12.2019 թվականին ժամը 11:00-ին, Ջրային կոմիտեի շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա):

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի վերաբերյալ

- Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Նախագահ	----------	Հ. Քելեջյան
Անդամներ	----------	Ա. Մարգարյան
	----------	Ս. Նազարյան
	----------	Գ. Հունանյան
Քարտուղար	----------	Ա. Սարգսյան